

թէ հայք անմիաբան են, իբրեւ թէ անմիաբանութիւնը բնածին պակասութիւն մը լինէր հայուն քով: Եթէ հայք միաբանեցան 300 թուականին, կրցան ընդունիլ միաբանութեամբ քրիստոնէութիւնը, եթէ իրենց օրինակին եւ ազդեցութեան հետեւեցան Վիրք եւ Աղուանք գրեթէ նոյն ժամանակին, եթէ հայ լեզուն կրօնից պէս կրցեր էր անցնիլ այդ սահմաններէն եւ Կուր գետի եզերքներէն մինչեւ Կորդուաց լեռները տարածուիլ, ինչո՞ւ չտեսնէք թէ միմիայն պատճառ՝ քաղաքագիտութեան պակասութիւնն էր Արշակունի թագաւորաց քով, որ Յայաստան անիշխանութեան կը մատնէր: Եթէ Տրդատ Նախարարաց դէմ նոյն հանճարն ու զօրութիւնը ի գործ դնէր՝ ինչ որ դրաւ՝ պարսիկը եւ կռապաշտութիւնը վարելու համար Յայաստանէ, Արշակունեաց աթոռը իւր մեռած վայրկէսէն չէր սասանէր ի հիմանց եւ Խոսրով իւր որդին չէր կարօտեր յունաց ամբարտաւան օգնականութեան իւր հօրն աթոռը բարձրանալու համար: Ի՞նչ կարօտութիւն ունէր Աղկունեաց դաւաճան Նահապետը եւ Նախարարութիւնը ջնջելէ վերջ՝ տեղը նոյն արտօսութեամբդ Մամիկոնեանք հաստատելու: Բայց Նախարարութիւնը երբ հանդարտ էր, թաղաւորներու համար ծուկութեան դիւրութիւն կ'ուտար երկրի կառավարութեան մասին, միայն թէ թագաւորները զօրաւոր լինէին: Մենք կը հասկանանք թէ այդպիսի 'ի գարուց խորարմատ Նախարարութիւնը հիմնահատակ ընել դիւրին չէր. բայց նոյնպէս դիւրին չէր հազարաւոր տարիներով արմատացեալ կռապաշտութիւնը ջնջել, եւ այդ կրցաւ ընել Տրդատայ կորովի բազուկը: Ինք պէտք էր ընել եւ այդ, եւ ոչ իւր անպիտան յաջորդներէն Արշակայ թողուլ, որ մոլութեանց եւ յիմարութեանց անճոռնի խառնուրդ մ'էր եւ քան զամենքը վատթարադոյն, եւ որ բնական էր թէ չի յաջողէր այդպիսի մեծ ձեռնարկութեան: Եւ հետեւանքս այն եղաւ, որ այս երկու թշնամեաց թագաւորութեան եւ Նախարարութեան պատերազմին մէջ, առաջինն անհետացաւ եւ երկրորդը խաղալիք լինելով օտարին պարսկին եւ հռոմին, երբեք չի մտածեց անկախութեան փորձ մը փորձել թեպէտ շատ յարմար վայրկէաններ ներկայացան: Այլ իր քաջութիւնը կը վատնէր օտարին ծառայութեան մէջ, Սասանեանը բանակներուն հետ կ'երթար մինչեւ Թրքաստան հոնաց եւ հեփթաղաց հետ կը պատերազմէր, քիւզանդական բանակներուն հետ կ'երթար մինչեւ Ափրիկէ եւ Իտալիայ եւ Դանուբի ափանց վրայ վանդալաց եւ գոթաց եւ բուլկարաց եւ սարմատացուոց հետ պատերազմելու համար:

Բայց անկարելի է ուրանալ, որ Նախարարութիւնը դիւցազնական վայրկէաններ ունեցաւ. Յազկերտի պէս մեծ եւ յաղթող թագաւորի մը դէմ խիզախեց Վարդանայ հետ եւ քաջութեամբ պատերազմեցաւ Վահանայ հետ Վարդաշ խոնարհեցուց եւ Կալատայ կրօնամոլութիւնը հալածեց. Վարդան երկրորդի հետ Նուշի բուռն Խոսրովու լուծը թօթափել հանդգնեցաւ: Բայց բոլոր այս